հանայ, կնշանակէ՝ շատ գիւղեր զուրկ են եկեղեցուց, եւ շատ եկեղեցիներ քահանայ չունեն, բայց կան այնպիսի գիւղեր, որոնք մի եկեղեցու փոխարէն ունեն մի քանիսը: Դրա հակառակ, համեմատաբար շատ խոշոր բազմութիւն են կազմում կուսակրօն աբեղաները, վանքերը եւ մենաստանները: — Վանայ նահանգն ունի 87 վանքեր եւ մենաստաններ, որոնց մէջ բնակւում են 1,500-ի չափ եպիսկոպոսներ, վարդապետներ, ճգնաւոր եւ մենակեաց աբեղաներ: — Այս բոլոր կրօնական հիմնարկութիւնների հանդէպ ամբողջ նահանգում չկայ ոչ մի ժողովրդական դպրոց: Կան, արդարեւ, մի քանի վանքերի խուցերում փոքրիկ վարժարաններ, բայց նրանք պատրաստում են տիրացուներ եւ կրօնաւորներ միայն, իսկ ժողովրդի հազարից մէկը անգամ գրագէտ չէ:

Երեւակայեցէք 87 վանքեր եւ մենաստաններ ու 1,500-ի չափ կուսակրօն աբեղաներ մի նահանգում, — դա մեծ քանակութիւն է: Բայց առաջ աւելի բազմաթիւ են եղել վանքերը. նրանց շատերի աւերակներն են մնում այժմ. եւ շատերը բոլորովին անհետացել են: Աբեղաների մասին նոյնպէս խօսում են, թէ այժմ նրանց թիւը կիսով չափ պակասել է. բայց այդ մնացածները դարձեալ շատ են: Եւ այս ծոյլ, ցնորամիտ «երկնաքաղաքացիների» ազդեցութեանն ենք պարտական, որ մեր ժողովուրդն այսօր գտնւում է իր խորին բթամտութեան մէջ:

Բայց եղել են ժամանակներ եւ այն ժամանակները շա՜տ հին են, երբ մեր եկեղեցականներն այնպէս չէին, որպէս այժմ: Նրանք դրանց նման անբնական կեանք չէին վարում. նրանք գերդաստանի հայրեր էին եւ ընտանիքների մէջ էին բնակւում: Այս պատճառով, նրանք գիտէին, թէ ի՞նչ է կեանքը, ի՞նչ է աշխարհը եւ ինչպէս պէտք է հոգ տանել նրա համար, որ մարդու ապրուստը հանգիստ ու բախտաւոր լինի: Գերդաստանի հայր լինելով, միեւնոյն ժամանակ նրանք ժողովրդի հայրն էին. ծնողական սիրոյ զգացմունքը առաջ էր բերել նրանց մէջ եւ խիստ ջերմ սէր դէպի ամբոխը, եւ բոլոր սրտով նոիրել էին իրանց անձը ժողովրդի բարօրութեանը: Իսկ այժմ չէ կարելի գտնել մի մարդ, որ այնպէս վայրենի, անզգայ եւ անտարբեր լինէր դէպի հասարակաց բարին, ինչպէս մեր կուսակրօն եկեղեցականը:

Վանքն այն ժամանակ, այժմեան պէս, աշխարհային գործերից փախած եւ իրան երեւակայական հոգեւոր ցնորքների նոիրած, ծոյլերի բնակարան չէր: Վանքն այն ժամանակ, այժմեան պէս շնորհավաճառութեան, կախարդութեան եւ տեսակ-տեսակ մոլութիւնների հանդիսարան չէր: — Վանքն այն ժամանակ հոգեւոր եւ մարմնաւոր դպրոց էր, ուր անխոնջ միաբանութիւնը պարապած էր մանկտու կրթութիւնով, գրքերի թարգմանութիւնով,